ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր №

№ 07/23.2/7143-14
«17» 11 2014 թ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆԻԿ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 05.11.2014թվականի թիվ 231-ի 4 հարցմանը՝ հայտնում ենք, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնատար անձանց, ինչպես նաև նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առնձնացված ստորաբաժանումներին սպասարկող ավտոմեքենաների թիվը սահմանված է ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի թրվ 194-Ն որոշմամբ, և կազմում է 17 մեքենա, իսկ 2014թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսներին նշված ավտոմեքենաների բենզինի ծախսը կազմել է համապատասխանաբար 1920լ և 2280լ (839700դրամ և 997850 դրամ):

Միաժամանակ խնդրում ենք Ձեր կազմակերպության կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարին ուղված գրությունները ներկայացնել Ձեր կազմակերպության տնօրենի կամ նրա կողմից լիազորված անձի (համապատասխան լիազորագրի առկայության դեպքում) անունից, հակառակ դեպքում դրանք կդիտարկվեն որպես իրավաբանական անձի կողմից չստորագրված գրավոր հարցումներ, և, հիմք ընդունելով Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված դրույթները, դրանց պատասխան չի տրվի:

Հարգանքով՝
Ժամանակավոր պաշտոնակատար

ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կատարող՝ Լեոնուհի Գևորգյան
597-203